ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Դպրոցի տնօրեն՝

Digitally signed by HARUTYUNYAN LILIT 5810860575
Date: 2023.09.01 03:59:31 PDT

Լ. Հարությունյան

# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# <<ՈՒՇԻԻ Ն.ԱՂԲԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ>>ՊՈԱԿ
# ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ
2023-2024 ուստարի

6-րդ դասարան

ԴԱՍՂԵԿ՝ Կ. Բաղումյան

# ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

6-րդ դասարանում սովորում է 11 աշակերտ / 8 տղա, 3 աղջիկ/: 2022-2023 ուստարում դասարանում գրանցվել են հետևյալ արդյունքները՝ 67 % որակ և 90% առաջադիմություն: 3 աշակերտ հարվածային է: Դասարանը հաճախել է մշակութային զանազան օջախներ, մասնակցել բաց դասերի, ներդպրոցական միջոցառումների, մրցույթների /նաև հեռավար/:

Դասարանն աչքի է ընկնում համախմբված և առաջադեմ լինելով: Սովորողները հատուկ հետաքրքրություն են դրսևորում ՀԵՊ առարկայի և մաթոմատիկայի նկատմամբ: Առանձնանում են իրենց կարողություններով: Մշտապես ակտիվ մասնակցություն են ունենում օլիմպիադաներին: Դասարանում կազմկերպել ենք էքսկուրսիաներ. այցելել ենք պատմամշակութային վայրեր: Պահում են դպրոցի ներքին կարգապահական կանոնները, խնամքով պահպանում դասարանում առկա գույքը: Դասարանում վարքային խնդիրներ ունեցող աշակերտներ չունենք: Սովորողներից առողջական խնդիրներ ունեցող ևս չունենք:

Մեծ է նաև ծնողների ներգրավվածությունը դասարանի կազմակերպչական աշխատանքներին: Դասարանում ամուր հիմքերի վրա է դրված դասղեկ-ծնողներ համագործակցությունը: Հաճախակի են եղել հանդիպումներ ծնողների հետ /նաև առցանց հարթակում/: Միասնաբար լուծել ենք աշակերտների առջև ծառացած խնդիրները: Պահպանվել է նաև ծնող- դասավանդող ուսուցիչներ կապը:

2022-2023 ուստարում պլանավորած և իրականացված աշխատանքները նպաստել են ծնող-երեխա, ուսուցիչ- ծնող հարաբերությունների գրագետ ամրապնդմանը:

Նոր ուստարում անհրաժեշտ է շտկել, ուշադրություն դարձնել հետևյալ խնդիրներին՝ առաջադիմությանը և ներքին կարգուկանոնին:

| ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ԺԱՄԿԵՏ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| **Կազմակերպչական աշխատանք**<br>/իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն/ | | |
| 1. Աշխատանքային պլանի կազմում | Սեպտեմբեր | |
| 2.Դասագրքերի բաշխում | Սեպտեմբեր | |
| 3.Դասասենյակի կահավորում<br>ա/ կազմակերպչական անկյուն | Սեպտեմբեր | |
| բ/նստարանների դասավորության ապահովում՝ ըստ անհրաժեշտության /ապահովել ախտահանիչ նյութերով/ | | |
| 4. Դասարանական ակտիվի ընտրություն | Սեպտեմբեր | |
| 5. Դասագրքերի վիճակի ստուգում | Ուստարվա ընթացքում | |
| 6. Հակահամաճարակային կանոնների հիշեցում | Սեպտեմբեր | |
| 7. Համաճարակային կանոնների պահպանման վերահսկողություն | Ուստարվա ընթացքում | |
| 8. Ծանոթացում դպրոցի տարհանման պլանին | Ուստարվա ընթացքում | |
| 9. Հաճախման ամենօրյա հաշվառում | Սեպտեմբեր | |
| 10. Դասագրքերի հանձնում գրադարանին | Մայիս | |

| Աշխատանք աշակերտների հետ | ԺԱՄԿԵՏ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|---|
| /դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ/ | | |
| 1. Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ<br>Ա. Կազմել աշակերտների ցուցակ,լրացնել տեղեկություններ ընտանիքների սոցիալական կարգավիճակի մասին | Սեպտեմբեր | |
| Բ. Անվճար տրամադրել դասագրքեր | Սեպտեմբեր | |
| Գ. Ընդգրկել ներդասարանական և արտադպրոցական միջոցառումներում: | Սեպտեմբեր | |
| Դ. Հնարավորության դեպքում կազմակերպել օգնություն ծնողական խորհրդի կողմից: | Ուստարվա ընթացքում | |
| 2. Ուսման մեջ հետ մնացող աշակերտներ<br>/անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն/ | | |
| Ա. Լրացուցիչ աշխատանք դասերից հետո<br>Բ. Աջակցություն համադասարանցիների կողմից | Ուստարվա ընթացքում | |
| 3. Անցանկալի վարք ցուցաբերող աշակերտներ<br>Ա. Անհատական զրույցներ<br>Բ. Հանդիպում ծնողների հետ | Ուստարվա ընթացքում | |
| 4. Առողջական և հոգեբանական խնդիրներ ունեցող աշակերտներ<br>Ա. Հավաքագրել առողջական խնդիրներ ունեցող աշակերտների տվյալները , մշտապես կապ պահպանել դպրոցի բուժքրոջ և ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ | Հոկտեմբեր | |
| Բ. Հոգեբանական խնդիրներ ունեցող աշակերտների հետ պարբերաբար վարել անհատական զրույցներ | Ուստարվա ընթացքում | |
| Գ. Կազմակերպել հանդիպումներ դպրոցի հոգեբանի հետ | Ուստարվա ընթացքում | |
| 5.Արդադպրոցական խմբակներ հաճախող աշակերտներ<br>Դասարանի շնորհալի աշակերտների բացահայտում և ներգրավում արտադասարանական միջոցառումներում: | Ուստարվա ընթացքում | |
| 6. Աշակերտական խորհրդի անդամներ<br>Դասարանական խորհրդի ընտրություններ<br>Մասնակցություն դպրոցի աշխորհրդի ընտրություններին: | Ըստ սահմանված ժամանակացույցի | |

| | | |
|---|---|---|
| **Աշխատանք ծնողների հետ**<br>/նպաստում է հանրակրթական դպրոցի և ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը սովորողների նկատմամբ/<br><br>1.Ծնողական ժողովներ<br><br>2.<<Դասը վարում է ծնողը>><br><br>3. Սեմինար-խորհրդատվություն | | |

| | | |
|---|---|---|
| **Աշխատանք մանկավարժական աշխատողների հետ**<br>/համագործակցության միջոցով նպաստել աշակերտների ուսումնադաստիարակչական խնդիրների լուծմանը, հոգեբանական բարդույթների հաղթահարմանը/ | | |
| 1. Դասավանդող ուսուցիչներին իրազեկել դասարանի բարոյահոգեբանական վիճակի մասին | Սեպտեմբեր | |
| 2. Տեղեկացնել հոգեբանական, վարքային խնդիրներ ունեցող աշակերտների մասին | Սեպտեմբեր | |
| 3. Պարբերաբար զրուցել աշակերտների ուսումնա-դաստիարակչական խնդիրների մասին | Ուստարվա ընթացքում | |
| 4. Իրազեկել սովորողների առողջական վիճակի մասին | Ուստարվա ընթացքում | |
| 5. Կատարել դասալսումներ տարբեր առարկաներից | Ուստարվա ընթացքում | |
| 6. Վերահսկել սանիտարահիգենիկ վիճակի պահպանումը | Ուստարվա ընթացքում | |
| 7. Ուսուցիչների և ծնողների հետ կազմակերպել հանդիպումներ /ըստ անհրաժեշտության/ | Ուստարվա ընթացքում | |
| 8. Ուսուցիչներին հրավիրել ծնողական ժողովների | Ուստարվա ընթացքում | |
| 9. Համագործակցել դպրոցի հոգեբանի, ուսուցչի օգնականներիհետ | Ուստարվա ընթացքում | |

| | | |
|---|---|---|
| Աշխատանքային և ֆիզիկական դաստիարակություն<br>(Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում:<br>Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում: Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում:)<br><br>Դասասենյակի հերթապահություն<br>Կազմել աշակերտների հերթապահության ցուցակ, հետևողական լինել դրանց անթերի կատարմանը:<br><br>1. Դպրոցամերձ տարածքի մաքրում<br>Ակտիվորեն մասնակցել դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքներին,<br>վերահսկել մաքուր տարածքների մշտական պահպանումը:<br><br>2. Մասնակցություն համաքաղաքային շաբաթօրյակներին<br>Ակտիվորեն մասնակցել համաքաղաքային շաբաթօրյակներին, ներգրավել դասարանի բոլոր աշակերտներին, սերմանել աշխատանքային դաստիարակություն:<br><br>3. Կանաչապատման աշխատանքներ<br>Գարնանը մասնակցել կանաչապատման աշխատանքներին,<br>խնամել դպրոցամերձ այգու բույսերը:<br><br>4. Ծառատունկ<br>Գարնանը մասնակցել ծառատունկին: | <br><br><br><br><br>Ուստարվա ընթացքում<br><br>Ուստարվա ընթացքում<br><br><br>Ուստարվա ընթացքում<br><br><br>Ուստարվա ընթացքում<br><br>Ուստարվա ընթացքում | |
| Ռազմահայրենասիրական և հոգևոր դաստիարակություն<br><br>(Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք հայ ազատամարտիկների նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ: Սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:) | | |
| Բարոյական և գեղագիտական դաստիարակություն<br><br>(Մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում: )<br><br>1. Զրույց- քննարկումներ դասղեկական ժամերի ընթացքում<br><br>2. Ընտանիքի միջազգային օր | Ուստարվա ընթացքում<br><br>Մայիս | |

| | | |
|---|---|---|
| Գիտաճանաչողական դաստիարակություն<br>(Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում : Պատմամշակութային արժեքների գնահատում, արժևորում: Նշանավոր մարդկանց օրինակով արժեհամակարգի ձևավորում:)<br>/էքսկուրսիաներ, արշավներ, հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ/ | | |
| Իրավական - քաղաքացիական դաստիարակություն<br>(Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում: Քաղաքացիական պատասխանատվության, արժանապատվության ձևավորում:) | | |
| Աշակերտական ինքնավարություն | Սեպտեմբեր | |
| Դասարանական խորհրդի ձևավորում | Սեպտեմբեր | |
| Աշակերտական խորհրդի ընտրությունների մասնակցություն | Սեպտեմբեր | Աշակերտներ, |
| Դասարանական անկյան ստեղծում | Ուստարվա ընթացքում | Դասարանակ անխորհուրդ |